******* ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ – ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ *******

ՈՒՄ՝ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS) ՏԱՆԸ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ

Դուք ստանում եք այս ծանուցումը, քանի որ դուք հանդիսանում եք ընթացիկ IHSS մատակարարող և 2016 թ. հունվարի 31-ի դրությամբ կամ դրանից շուտ համապատասխանում եք հետևյալ պայմաններին.

1. Դուք IHSS ծառայություններ եք տրամադրում երկու կամ ավել IHSS ստացողներին:
2. Դուք բնակվում եք նույն տանը, որտեղ ապրում են բոլոր IHSS ստացողները, ում դուք ծառայություններ եք տրամադրում:
3. Դուք ազգակցական կապեր ունեք IHSS ստացողների հետ, ում ծառայություններ եք տրամադրում՝ որպես նրա ծնող, խորթ ծնող, որդեգրած ծնող կամ տատ ու պապ, կամ դուք նրա իրավական խնամակալն եք:

Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ նահանգային օրենքը սահմանափակում է առավելագույն շաբաթական ժամերը, որոնք IHSS/Հրաժարման անձնական խնամքի ծառայությունների (Waiver Personal Care Services, WPCS) մատակարարողները կարող են աշխատել մեկ աշխատանքային շաբաթում: IHSS/WPCS-ում աշխատող մատակարարողները վճարվելու են արտաժամյա, եթե աշխատում են շաբաթական 40 ժամից ավել, սակայն մատակարարողները չպետք է գերազանցեն 66 ժամ մեկ շաբաթում միասնաբար IHSS և WPCS համար:

Հնարավոր է, որ դուք իրավասու լինեք 66 ժամ աշխատանքային շաբաթվա բացառության համար, եթե համապատասխանում եք վերոնշյալ 1, 2 ու 3 պայմաններին: Դուք կարող եք աշխատել առավելագույնը 90 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, և առավելագույնը մինչև ամսական 360 ժամ՝ ըստ այս բացառության:

Սակայն նույնիսկ այս բացառությամբ՝ դուք չեք կարող աշխատել 90 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում կամ 360 ժամից ավել մեկ ամսում: Եթե ձեր ժամերը ձեր ստացողների համար գերազանցում են այս քանակը, ապա ձեր IHSS ստացողները պետք է աշխատանքի ընդունեն մեկ այլ IHSS մատակարարող, որը կարող է աշխատել նրանց մնացած IHSS ժամերը:

Եթե ցանկանում եք ստանալ այս բացառությունը, դուք պետք է լրացնեք, ստորագրեք ու ամսագրեք Տնային աջակցության ծառայությունների ծրագրի տանը բնակվող ընտանեկան խնամքի մատակարարողի արտաժամյա բացառության (SOC 2279) կցված ձևաթուղթը: Դուք պետք է վերադարձնեք SOC 2279 Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժին (California Department of Social Services, CDSS) կցված ծրարով մինչև 2016 թ. ապրիլի 1-ը:

Եթե հանգամանքների բերումով դուք այլևս չեք համապատասխանում վերոնշյալ երեք (3) պայմաններին, ապա դուք այլևս չեք որակավորվում այս բացառության համար, ու պետք է անմիջապես տեղեկացնեք վարչաշրջանն այդ մասին:

Եթե հարցեր ունեք այս բացառության մասին SOC 2279, խնդրում ենք զանգահարել CDSS՝ (916) 551-1011 հեռախոսահամարով: